

15660

ԿԱՐԼ ԿԱՆԿԻ

ՀԱՐԵԱՆԱԿՐԻՒԼՅՈՒՆ

321:8

4-37

ԹԻՎԵԿ

1906

323.1

4-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

321.8

4-37

ԿՍՐԼ ԿԱՌԻՑԿԻ

15 JAN 2010

ՀԱՅՐԵ ՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ



USM-7218 Է
1994 թ.

323.1

4-22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Թ Ի Յ Լ Ի 2

1906

26 SEP 2006

321.8

4-37

Բանասիրական գրադարան

ԿՍՐԼ ԿՍՈՒՅԿԻ

Հ Ա Յ Ր Ե Ն Ա Ս Ի Ր ՈՒ Թ Ի Ի Ն

2002
27312

— — — — —



Թարգմ. Մ. Տիրաղեանի

— — — — —



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Գուտտենբերգ II Կոմ. Գյրտենբերգ

1906

20 MAY 2013

75660

321.8
4-37

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Հայրենասիրութիւնը միջազգայնութեան հետ համաձայնեցնելու խնդիրը, այնքան էլ հեշտ չէ: Այդ՝ կախած է նրանից թէ ինչ պէտք է հասկանալ հայրենասիրութիւն ասելով: Հայրենասիրութիւնը արտաքին, բնութիւնից տրւած մի բան չէ—նա արդիւնք է հասարակական կեանքի: Հայրենիքը փոփոխուում է, հասարակական յարաբերութիւնների փոփոխմամբ և ամեն մի հասարակութեան մէջ, հայրենասիրութեան կատարած դերը այլ է՝ իւրաքանչիւր դասակարգի համար, ինչպէս նաև այլ է նոյն այդ դասակարգի հայրենասիրութիւնը:

Մարքսի և Էնգելսի գիտնական սօցիալիզմի հիմնադիրների բռնած դիրքը, իրանց ժամանակի ազգային խնդիրների վերաբերմամբ, լաւագոյն կերպով ցոյց է տալիս, հայրենասիրութեան որքան բարդ խնդիր լինելը, որովհետև նրանց դիրքը թոււմ էր թէ լի է հակասութիւններով: Նրանք չափազանց ուժգնութեամբ և վճռականորէն պաշտպանում էին ունգարացիների, իտալացիների և լեհերի ազգային ձգտումները, միևնոյն ժամանակ խստիւ պաշտպանելով և՛ գերմանացիների ազգային ձգտումները: Մարքսը և Էնգելսը, գերմանացիների ազգային ձգտումները պաշտպանելու գործում այնքան հեռու գնացին, որ նրանց կարելի էր գերմանացի հայրենասէրներ անւանել,



262-93

եթէ միայն նրանք 1870 թ.,-ին շանցնէին ֆրանսական հանրապետութեան կողմը, կայսերական Վերմանիայի դէմ և ետանդուն կռիւ չմղէին ընդդէմ Ալլաս-Լոտարինդայի յափշտակման: Ինտերնացիօնալի զլխաւոր խորհրդի երկրորդ կողմ ֆրանս-գերմանական պատերազմի մասին, ետանդազին բողոքեց 19-րորդ դարի երկրորդ կիսում նորից ծնունդ առած «եղեռնագործութեան», նաճաճների քաղաքականութեան և ֆրանսիական երկրի յափշտակութեան դէմ:

Բայց վճռականօրէն պաշտպանելով վերոյիշեալ ազգերի ազգային ձգտումները, Մարքսն ու Էնգէլսը շարունակ՝ ոչ միայն անվատահոսութեամբ, այլ մինչև իսկ բացասօրէն էին վերաբերում Աւստրիոյ և Թիւրքիոյ հպատակ եղող սլաւոնական մանր ազգերի անկախութիւն ձեռք բերելու ձգտումներին:

Այդ շատ հակասական է երևում, եթէ հայրենասիրութիւնն ու ազգայնութիւնը բուրժուական հասկացողութեան տեսակէտից դատելու լինենք. բայց եթէ այդ երեւոյթների վրայ նայենք, պրօլետարիատի ազատագրութեան կռիւ տեսակէտից, այն ժամանակ ոչ մի հակասութիւն չենք դըտնում Մարքս և Էնգէլսի այլակերպ վերաբերմունքի մէջ:

Յաճախ մատնանիշ է արւած այն ըսնքի վրայ, որ պրօլետարիատը, որպէս ամենատարին դասակարգ, չի կարող ազատել, մինչև որ վերջ չդրուի ամեն տեսակի՝ ի թիւս որոց և՛ ազգային հարստահարութիւններ ինչպէս շահագործութիւններ: Այն ազգութեան պրօլետարիատի անդամները, որին ճնշում է, շահագործում է կամ որի ինքնուրոյնութեանը սպառնում է,

մի այլ ազգութիւն, պարտաւոր են կռել այդպիսի, ինչպէս նաև այլ տեսակի ճնշումներին դէմ: Բայց միւս կողմից պրօլետարական տարրերը այն ազգի, որը ինքը հարստահարում ու շահագործում է իր հարևան ազգութեան կամ սպառնում է նրա ինքնուրոյնութեան, ոչ մի շահ չունեն իրանց ազգի տիրող դասակարգերի համար միայն շահաւէտ եղող դիրք գրաւելուն մէջ, այն իսկ դասակարգերի համար, որոնք շահագործում և հարստահարում են հայրենի պրօլետարիատը: Հպատակ ազգութեան պրօլետարները, ընդհակառակն, բնական դաճակալիցներն են տիրող ազգութեան պրօլետարներին: Այդպիսով, ազգային հակասութիւնները տեղ չեն կարող ունենալ պրօլետարիատի միջավայրում. վերջնոյս համար, ամենուրեք ուր նա արգէն սկսել է մտաւորապէս ու քաղաքականապէս ինքնուրոյն դաննալ, օտար են այդ ներհակութիւնները: Այն երկրներում, որտեղ պրօլետարիատը հասել է այդ մակերեւոյթին, նա, երբէք ցոյց չի տային ազգեսօս հայրենասիրութիւն և երբէք չի ցանկանում ուժեղացնել իր սեփական հայրենիքը ի հաշիւ մի այլ ազգութեան:

Բայց այդ՝ պրօլետարական հայրենասիրութեան միայն մէկ և այն էլ ոչ ամենաբնորոշ կողմն է: Միւս դասակարգերը, որոնք չեն պատկանում հարստահարող դասակարգերին, նոյնպէս կարող են արտայայտել այդպիսի իսպաղ—արամադրած և համբերող հայրենասիրութիւն, ինչպէս այդ արայուցանում է մանր-բուրժուական բազիկայիցը:

Բայց պրօլետարական ազատագրական կռիւը, մղում է ոչ միայն ընդդէմ ամեն

տեսակ ճնշման ու շահագործութեան, այլև մղում է ձեռք բերելու համար արտադրութեան նոր եղանակ և դրա հետ միասին հասարակական նոր կարգեր, որոնք ինքնուրույն ինքեան հնարաւոր են զարձնում ամեն կերպ ճնշման ու շահագործման ոչնչացումը: Այդ նոր հասարակութիւնը կունենայ և՛ համապատասխան նոր էտիկա:

Փամանակակից ապրանքային արտադրութիւր, արտադրութիւն է անկախ արդիւնաբերողներէ, որոնք միանգամայն ազատ կերպով մրցում են միմեանց հետ: Իրերէ այդպիսի դրութիւնը տանում է դէպի լիբերալիզմի և անարխիզմի էտիկական իդէալը, դէպի անձի ինքնիշխան, (САМОДОВЛЕТВІЮЩЕЙ) լիակատար ազատութեան իդէալը: Այս դէպքում՝ լիբերալիզմը անարխիզմից զանազանում է նրանով, որ նա յարմարեցնում է իր էտիկան՝ կապիտալիստական ապրանքային արտադրութեան պահանջներին և այն ազգային ու սօցիալական հակասութիւններին, որոնք պետութեան բռնազբօսիկ կազմակերպումը անհրաժեշտ են զարձնում. մինչդեռ անարխիզմը՝ հակա-կապիտալիստական է: Եւ անարխիզմի այդ հակա-կապիտալիստականութիւնը ըստիպում է նրան, ինչքան էլ որ իրան «մօզնի» հոչակելիս լինի, իր իդէալը սրտնել ոչ—բարդ՝ մանր-բուրժուական և մանր-գիւղացիական ապրանքային արտադրութեան մէջ: Անարխիզմը—ամենքի համար լիբերալիզմն է, իսկ լիբերալիզմը—անարխիզմն է միայն տիրող դասակարգերի և իրանց պարագիտներէ:

Բայց վերադարձը դէպի հասարակ արտադրութիւնը չէ կարող յաղթահարել արտադրութեան կապիտալիստական եղանա-

կին, այլ միայն կապիտալիստական մասնաւոր արտադրութեան տեխնիկական միջոցների գրաւումը (էքսպրուպրիացիան) յօդուտ ամբողջ հասարակութեան, այսինքն հասարակահասցրած արտադրութեան, որը կատարում է հասարակութեան ձեռքով նոյն այդ հասարակութեան համար: Հասարակահասցրած արտադրութիւնը կը լինի պրօլետարիատի իդէալը, որ ծնունդ է աւնում կապիտալիստական արտադրութեան եղանակից, հէնց որ այդ պրօլետարիատը հոգեպէս և քաղաքականապէս կաղաւթի լիբերալիզմից անարխիզմից: Իրա հետ միասին, անհատը պրօլետարիատի համար ոչ թէ նպատակ է, այլ միայն միջոց՝ նպատակի: Իսկ այդ նպատակը մի ուրիշ անհատ չէ, այլ հասարակութիւնը, համախմբումը, որին իւրաքանչիւրը առանձնապէս պարտաւոր է ծառայել: Ոչ թէ մասնաւոր անձի ինքնիշխանական, անձնասիրական անսանձ կեանք վարելու տենչը, այլ հասարակութեան, համախմբութեան համար ինքն իրան անսանձանօրէն զոհելը կը լինի սօցիալիստական նոր էտիկայի կատէգորիկական իմպերատիւրը, որ բղխում է ոչ թէ ինչ որ միատիկակա, աշխարհից «իրը իւր մէջ» ըստ Կանտիդ այլ շատ բէալական աշխարհից՝ «իրը մեզ համար» այսինքն արտադրութեան եղանակից: Պրօլետարը իր էրջանկութիւնը սեփական անձի մեծութեան և հօգրութեան մէջ չի տեսնում, այլ այն կազմակերպութեան ոյժի և մեծութեան մէջ, որին ինքը պատկանում է:

Եւ զբանով երբէք խոչընդոտներ չեն ստեղծում անհատի ազատ զարգացման համար, ընդհակառակը, ազատ զարգացումը որը ներկայումս միայն սակաւաթիւ «գեթ—

մարդկանց» առանձնաշնորհունն է կազմում, կը դառնայ ընդհանուրի բարիք: որովհետև միայն հասարակականացրած արտադրութիւնն է որ իւրաքանչիւր առանձին անհատի անիւ է դարձնում մեծ մեխանիզմի համար և դրանով հնարաւորութիւն է տալիս ամենքին ունենալու բաւականաչափ հանգըստեան միջոց որից ամենքը օգտւելով, աշխատանքը աւարտելուց յետոյ, կարող կը լինեն ազատօրէն գարգանալ և մասնաւոր կեանքով ապրել: Մենք այդ խարցը անցողակի կերպով շօշափեցինք, փարատելու համար մտաւոր ընթերցողների երկիւղը, անձի ազատութեան ապագայ ճակատագրի վերաբերմամբ: Անձի ազատութեան ապագայ վիճակը մեր նիւթին չի վերաբերում: Բայց որ առանձին անհատների միութիւն մի մեծ արտադրութեան մեխանիզմի մէջ, որին իւրաքանչիւրը պիտի ծառայէ որպէս նրա մի փոքրիկ մասնիկը,—այդ միութիւնը, պրօլետարիատի ազատագրական պայքարի նպատակն է և միևնոյն ժամանակ պրօլետարիատի կուսի ամենախրաջան միջոցներից մէկը: Ծնորդն իր կազմակերպութիւնների գարգացման, նա յազմական կերպով քայլում է յառաջ, իսկ կազմակերպութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ առանձին անհատների նեթարկելը համախմբութեան, կամ սահմանափակումը՝ անհատական ազատութեան: Մեր հակառակորդները ոչ մի բանի մասին այնքան պիտի չեն բարձրացնում որքան սօց-դեմօկրատիայի և բանտօրական միութիւնների մէջ տիրապետող «տեւօրիզմի» մասին. բայց այդ դէպքում նրանք մոտանում են որ—ազատ անհատը—ձոխութիւնն է, որը ներկայումս բացի դատարկագորտներից և ցոփակեաց-

ներից իրանց թոյլ են տալիս միայն հարուստներից հարուստները: Նրանք մոտանում են որ հարցը բոլորովին նրանում չէ, թէ ով պէտք է տիրապետէ արտադրութեան և հասարակութեան մէջ—կազմակերպութիւնը, ազատ անհատը, այլ նրանում՝ թէ առանձին անհատների ծառայող կապիտալիստական կազմակերպութիւնը պիտի տիրապետէ, թէ ամբողջ հասարակութեան ծառայող սօցիալիստական կազմակերպութիւնը:

Բայց ինչնու համար են այս համեմատութիւնները, հարց կըսան շատ ընթերցողներ: Չէ որ հայրենասիրութեան մասին է խօսքը և ոչ թէ էտիկայի: Միանգամայն ճիշդ է: Բայց հայրենասիրութիւնն ու էտիկան իրար հետ զատ սերտ կերպով են աճել և բուրժուական ու պրօլետարական հայրենասիրութեանց զանազանութիւնը լատագոյն կերպով կարելի է հասկանալ միայն այն ժամանակ, երբ որ հասկանալի եղած կլինի բուրժուական ու պրօլետարական էտիկաների զանազանութիւնը: Բուրժուական մտածողութիւնը առաջին տեղը առանձին անհատին է տալիս, հասարակութիւնը պոլութիւն ունի միմիայն անհատի համար և նրա հոգսը միայն այն պիտի լինի որ անհատները միմեանց հետ չընդհարեն, ինչպէս այդ արտադրարեց ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան հրատարակած Յայտարարութիւնը (Ինկլարացիա) ընդհանրապէս իրաւունքներով օգտւելը, իւրաքանչիւր մարդու համար, այլ սահմաններ չունի, բացի նրանցից, որոնք ապահովում են հասարակութեան միւս անդամներին նոյն այդ օրէնքներից օգտւելը: Բայց բուրժուական իր «անձը» սակեով ի նկատի ունի

ոչ միայն այն՝ ինչ որ ինքը է—այդ այն-
քան չնչին բան է որ ոչ որ նրան չի սպառ-
նում—այլև այն՝ որ նա ունի: Վերջնոյս աւե-
լի, ամենից աւելի սպառնում են նրանք, ո-
րոնք ոչինչ ջուկեն—պրօլետարները: Յեղա-
փոխութեան Դեկտրացիան, ի թիւս մարդու
և քաղաքացու անկապտելի իրաւունքների
դասեց և՛ սեփականութիւնը: Եւ ոչ միայն
աննատի աշխատանքի արդիւնքը, ոչ, այլ
այն ամենը ինչ որ պատկանում է մարդուն,
ինչ ճանապարհով էլ որ ձեռք բերած լինի
այդ ստացւածքը, ինչ չափով էլ որ ուրիշ
անհատների աշխատանքի արդիւնք եղած
լինի այն. թէկուզ ստացւածքի տէրը շատ
քիչ աշխատանք գործ դրած լինի իր սե-
փականութեան ստեղծագործութեան մէջ:
Բուրժուական «հայրենիք»-ում սեփականու-
թեան պահպանութիւնը միեւնոյն նշանա-
կութիւնն ունի անձի պահպանութեան վե-
րերմամբ, ինչ որ ազատութիւնը, ապահովու-
թիւնը և ընդդիմադրութիւնը ճնշման
դէմ: Գործնական կեանքում սեփականու-
թեան պաշտպանութիւնը, արտայայտուած
է մինչև իսկ որպէս հիմք բուրժուական
հայրենիքի, և հայրենիքը որպէս ամբողջ
ազգային հարստութեան համախմբումն,
կազմում է մասնաւոր սեփականութեան
ամբողջական համախմբութեան մարմնացու-
մբ: Ունեւոր դասակարգերի համար հայրե-
նիքը, իրանց սեփական հարստութեան և
սեփական հզօրութեան արտայայտութիւնն
է: Մասնաւորապէս, կապիտալիստների դա-
սակարգի համար հայրենիքը, գնալով դառ-
նում է ժառանգական մի կարածք (ДОМЪ),
որտեղ այդ դասակարգը ապաստօրէն անօրի-
նութիւններ է անում և որից օգուելուց՝
նա աշխատում է հեռացնել թէ՛ օտարի-

կրեայ իր մրցակից կապիտալիստներին և
թէ սեփական երկրի պրօլետարներին: Ինչ-
քան էլ որ անձնասէր լինի առանձին կա-
պիտալիստը, որքան էլ որ նա անտարբեր
վերաբերմունք ունենայ զէպ ի ընդհանուր
բարեկեցութիւնը, բայց և այնպէս այն ամեն
հարցերում, որոնք վերաբերում են դասա-
կարգային շահերին, ունեւոր դասակարգերը
միշտ ամենահայրենասէրներն են և ամեն
մի հասարակական հաստատութիւնից բարձր
տեղ են տալիս հայրենիքին:

Միւս կողմից, պահպանել սեփականու-
թիւնը, նշանակում է ոչ այլ ինչ, եթէ ոչ
զբեկ նրա օգուտից նրանց՝ որոնք ոչինչ
չունեն: Եւ եթէ հայրենիքի վրայ նայելու
լինենք, որպէս բոլոր հարստութիւնները իր
մէջ բովանդակող մի համախմբութեան վը-
րայ, կըտեսնենք որ պրօլետարիստը դուրկ
է հայրենիքից: Այդ ասում են ոչ միայն
Մարքսն ու Էնգելսը—այդ ասել է և Տրվերի
Փրակիսը իր հռչակաւոր ձառի մէջ, որտեղ
նա մասնաւոր է արել, որ «Իտալիայի վայրի
զազաններն անգամ ունեն իրանց քարան-
ձաւներն ու որջերը հանգստեան համար,
մինչդեռ, այն մարդիկը, որոնց ուսին հանգ-
չում է իտալական հայրենիքի մեծութիւնը,
կանանցով ու զաւակներով դուրկ են մըշ-
տական յարկից:

Պատերազմի ժամանակ, զօրավարնե-
րը կոչ են անում մարդկանց կուելու ի-
րանց տնային աստւածների և նախնեաց
շիրիմների, այսինքն հայրենիքի համար—
այդ մի ծաղր է. որովհետև նրանց բոլորի
մէջ հազիւ թէ գտնուի մէկը, որ տէր եղած
լինի իր մերձաւորների դամբարանների
կամ սեփական տնային խորանի: Նրանք
սուր են բարձրացնում և մեռնում են կուի

գաշտում միայն այն պատճառով, որպէս զի ուրիշների համար ձեռք բերեն հարցա-տութիւն, շուք և անտուակ վայելքներ: Եր-րանք նւաճել են աշխարհը և նրա տիրա-պետողներն են համարել: Ըստց իրանք մի կտոր սեփական հող անգամ չունենն:

Բայց պրօլետարները կամենում են ոչնի-չացնել այն իրաւունքը՝ որ մասնաւոր սե-փականութիւնն ունի ազգութեան կապիտա-լիստական հարստութեան կամ հայրենիքի վրայ, նրան՝ ամբողջ հատարակութեան ըս-տացւածքը դարձնելու համար. նրանք ու-ղում են, տիրական կազմակերպութեան և յարիշտակողական շահագործութեան պետու-թիւնը վերածել հասարակական արտադրու-թեան օրգանիզմի: Պրօլետարները այդպիսով ուղում են ձեռք բերել իրանց հայրենիքը, որից զուրկ են. նրանք ուղում են ընդգայնել նրա գործողութիւնները և համախմբութեան միջոցով, նրա բարիքները մատչելի դար-ձնել ազգի բոլոր անդամներին. նրանք ու-ղում են վերջապէս ազատել հայրենիքը տեղական և օտարերկրեայ ընկճողների ու կողոպտիչների ուէ արքայաւտութիւնից: Այդ մտքով վերցրած՝ պրօլետարները ազգային են, և իսկաւ շահադրուած հայրենիքի ան-կախութեամբ ու բարօրութեամբ:

Բայց հասարակականացրած արտադրու-թեան հասարակական օրգանիզմը, որին նրանք ձգտում են, չի կարող սահմանափակ-ւել մի ազգի կամ մի երկրի շրջանակներով: Արտադրութեան կապիտալիստական ե-ղանակը ստեղծել է համաշխարհային շուկայ. և եթէ առաջ երկրները փոխանակում էին միմեանց հետ միայն իրանց աւելարդ և իւրաքանչիւր երկիր ինքն էր արտադրում իրա համար անհրաժեշտ եղածը, այժմ՝ մի-

ջազգային առևտուրը բոլոր կապիտալիս-տական ազգութիւնների համար դարձել է կեննական անհրաժեշտարիւմ և այդ ազգե-րից ոչ մէկը չի կարող, առանձինն գոյու-թիւն ունենալ: Այդ պատճառով, ապրան-քային արտադրութեան դազարեցումը տանում է ընանհրաժեշտօրէն, դէպի ամբողջ միջազգային արտադրութեան հասարակա-կան կանոնաւորումը, դէպի հասարակա-կանացրած արտադրութեան այնպիսի մի օրգանիզմ, որը կընդգրկէր ամբողջ համաշ-խարհային շուկան:

Իրանից հետում է այն, որ համախմբու-թիւնը, որին իւրաքանչիւր անհատ պար-տական է ծառայել, կըլինի ոչ թէ հայրե-նիքը կամ ազգը, այլ ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը:

Եւ այդ՝ ապագայի ուէ ցնորական մի ու-տօպիա չէ—ոչ, այդ այժմ իսկ չափազանց գործնական ձևով երևան է գալիս պրօլե-տարիատի դասակարգային կաւում, որ դնալով աւելի միջազգային է դառնում:

Իուրժուական աշխարհը նոյնպէս, ի հարկէ, հարկադրւած է ընդունելու, ինքնայատուկ մի միջազգայնութիւն, որ ծնունդ է հա-մաշխարհային առևտրի. *) ըստց այդ մի-ջազգայնութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ ըստ բուրժուական էտիկայի անհատների մէջ տիրող յարաբերութեանց փոխանացումը՝ ազգերի յարաբերութեանց վրայ: Կապի-տալիստական էտիկան իրաւունք է տալիս, իւրաքանչիւր առանձին երկրի, ինչպէս նաև իւրաքանչիւր առանձին անհատի, բազմա-

*) Տես Ք. Կալլիէր—համաշխարհային անաե-տութիւն XX դարու սկզբում Ս. Գ. Գ. 1905 թ..

պատկելու իրկարողութիւնը և ընդարձակելու իր տիրապետութեան շրջանը ի հաշիւ ուրիշներին, և ոչ թերը ներածին պէս անօրինել նրանց: Նազ անգութ է հասարակ ապրանքային արտադրութեան համապատասխանող մանր-բուրժուական բաղիկալիզմը կամ անարխիզմը, որի ուղղութիւնը պահանջում է «laissez faire laissez aller» (ինչ որ ուզում են թող տան) սկզբունքի գործադրութիւնը: Բայց այստեղ անհատի իրաւունքները սահմանափակում են, ուրիշ անհատների հաւասար իրաւունքներով: այդ նոյն սկզբունքը պէտք է գործադրել և՛ ազգի վերաբերմամբ, քանի ղեռ նա չի շօշափում ուրիշ ազգութեանց շահերը:

Պրօլետարիատի միջազգայնութիւնը բուրժուական այլ բնաւորութիւն է կրում, քան բուրժուական միջազգայնութիւնը, որ թողլատրում է իւրաքանչիւր ազգի վարելը ըստ իր հայեցողութեան: Նա պահանջում է, ազգերի ինչպէս և անհատների միութիւնը, միահարցն և համաչափ (уравномерно) գործունէութեան համար, և համապատասխան դրան, ներկայումս նա արդէն փաստօրէն միացնում է այլ և այլ ազգութեանց պրօլետարական կազմակերպութիւնները:

Միջազգային սօցիալիստական հասարակութեան վերջնական նպատակը և պրօլետարիատի ազատագրութեան միջազգային կռիւը — միմեանցից անբաժանելի և հոմանիշ են. անհեթեթութիւն կը լինէր առաջինը ոչինչ համարել, իսկ երկրորդը ամեն ինչ: Սակայն, վերջնական նպատակին կամ կռիւին և կամ երկուսին միանգամայն առաջնութիւն չտալու համար — հայրենիքն ու անձաւը կը զարգարեն

լինելուց այն կենդրոնը. որի շուրջը պտուտում են մեր քաղաքական և սօցիալական մտածողութիւնն ու գործունէութիւնը: Հասկանալի է որ սօցիալիստական վերջին նըպատակին յանգելը, պէտք է առաւել ազատութիւն տայ անհատների մասսային, պէտք է աւելի հարստացնէ և ապահովացնէ առանձին ազգերը, քան ինչ որ մինչև այժմ կարողացել է անել ոնէ այլ հասարակական կազմակերպութիւն: Եւ ղէպի վերջնական նպատակը ուղղած այդ շարժման, իր ամբողջութեամբ վերցրած, պիտի ուղեկցին անկասկած, անհատների հետզհետէ աւելի աճող ազատութիւնը, հարստութեանց մեծացումը և առանձին ազգերի ապահովութիւնը: Բայց ամեն մի ղէպը ում անհատներն ու ազգերը պիտի ենթարկեն, պրօլետարիատի ազատութեան համար մղող միջազգային կռիւին. և որտեղ որ ազգի և անհատի մասնակի շահերը ընդհարելու լինեն ազատագրութեան այդ կռիւ պահանջների հետ, այնտեղ՝ անհատական, ազգային, ինչպէս նաև ամեն մի ուրիշ մասնաւոր շահ, օրինակ, պրօֆէսիօնալ կամ ընկերակցական (КРУЖКОВЫЙ) պէտք է մղեն երկրորդ պլանը:

Կապիտալիստականօրէն մտածող ազգայինը կարող է ասել. — right or wrong, my country — իրաւացի է թէ ոչ, բայց ես կը լինեմ իմ հայրենիքի կողմը: Սօցիալ-ղէտօկարատը, ընդհակառակը պէտք է բաւականաչափ քաջութիւն և ինտելիգենտութիւն ունենայ, որպէսզի կարող լինի հասկանալ, որ առանձին ազգութեան մասնաւոր, թէկուզ սեփական շահը, կարող է յաճախ խափան հանդիսանալ պրօլետարիատի ազատագրական կռիւ ճանապարհին և այդպիսի ղէպ-

քերում, սօցիալ-դէմօկրատը պարտաւոր է այդ օրինակ հասկացողութեան համապատասխան վարմունք ունենալ: Այդ համոզմունքի հիման վրայ, կարելի է բացատրել Մարքսի և Էնգելսի ընդդէմազրութիւնը աւստրիական և թրքական սլաւօնների (բացառութեամբ լեհերի) ազգային ձգտումներին, քանի նրանք կարծում էին թէ, այդ ձրգտումներից օգուտ են ջաղելու, միմիայն միջազգային ազատարար կռիւ ամենալաւթամբ թշնամիները: Իրանով կարելի է բացատրել նոյնպէս և այն, որ Մարքսն ու Էնգելսը, նրանց հետ միասին և ամբողջ գերմանական սօց.-դէմօկրատիան, ֆրանքո-գերմանական պատերազմի ժամանակ, կանգնեցին սեփական ազգի նացիօնալիզմի դէմ, երբ տեսան՝ որ այդ նացիօնալիզմի ստացած 'ձեւերը, խոստանում էին օգուտ բերել միայն հօհէնցօլլերներին և կեսարութեան և խորպպէս փաստում էին—գերմանական և ֆրանսիական զէմօկրատիային:

Անա այն ամենը, ինչ որ կարելի է սեսել հայրենիքի, միջազգայնութեան հետ ունեցած ստնշութեան մասին:



Շուտով լայն կտեսնեի

Վ. Բրահեի

«ԿՈՐԶԻՆ, ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏՆԵՐԸ»

Դիմել է Յ կողմ.

Հասցեն՝ Թիֆլիս, «Կայծ»-ի իմքատիրոջ թիւն

«Ազգային գրադարան



NL0192202

